



36. ՂՍՄԱԹ

էլի ա, շի էլի մի քյասիբ մարդ: Ունեցել ա մի հինգ ջան քյուլֆաթ: էս հինգ ջան քյուլֆաթիցը էս մարդը փախել ա, ունի ոչ՝ ուտեցնի, հագցնի: Գնացել ա ձորի միջին, ջրի դրաղին մի մենձ խնձորքի գտել, տեհել ա՝ շատ հասած ա: էս խնձորիցը ինքը կերել ա՝ առողջացել, ջահելացել: Խնձորները քաղել ա, ջերը լքցրել, գնացել ա դրբա քաղաք:

Թաքավորը նրան տեհել ա, վանչել ա, թե.— Արի՛, տենանք ձեր թաքավորը ինչպե՛ս ա ձեզ պըհում: Խարջըներդ ինչքա՞ն ա առնում:

Ձուլումքար թաքավորի երկրիցն ա էլի:

Ասել ա.— Գլխին քսան մանեթ առնում ա, էդքան էլ անջախ ենք աշխատում:

Ասել ա.— Վա՛յ, վա՛յ, վա՛յ, ջանս դուս գա ձեզ հմա, ին՛չ անեմ, ծերութիւնն առել ա ինձ:

Ասավ թե.— Թաքավորն ապրած կենա, ես էլ քե պես ծերացել ի, էկա, ձորի միջին խնձոր ոաստ էկավ, անմահական էր, ի՞նչ էր, կերա՛ ջահելացա:

Ասավ թե.— Որդի՛, էն խնձորեն կարալ չե՞ս գտնի:

— Ո՞նց չեմ կարալ գտնի. իմ էկած ճամփան ես կգիտենամ:

— Դե բա ո՞նց անենք, որ դու բերես, ուտենք, ջահելանանք,

մի կենտ ընդհանուր ունենք օխտը տրրեկան, ես էքուց կմեռնիմ, կը-
մնա անտեր-անտիրական:

— Ի՞նչ կտաս, ասա, որ գնամ բերեմ:

Թե.— Քու քաշովը մին ոսկի կըտամ:

էս մարդը ունեւ ջերուձը խնձորիցը, հանեց, մինը խանումին
էրետ, մինը՝ թաքավորին:

Ռավուտը վե կացավ տեհավ, որ խանումն էլ ա ջահելացել,
թաքավորն էլ:

Վերջը էս մարդը քաշեց ոսկին, էրետ էդ մարդին:

— Օ՛հ աստոծ,— ասավ թաքավորը,— դու որ իմ կանչը կա-
տարեցիր, ես պետք ա մատաղանա տամ քյասըբին, որբին:

էս թաքավորը ջառ գցեց, փողը բաց արավ, փայլ արավ
աղքատին, որբին:

Արի՛, որ էն քյասիբ մարդը ոսկին առած տուն ա գնում: Գը-
նաց, մտիկ արավ, որ մի մարդ քնած ա:

Ասավ.— Տեր աստոծ, էս մարդին վեկացնե՞մ, թե անցնիմ
գնամ:— Չէ՛, չէ՛,— ասավ,— վե կացնեմ:

Աստըծանե միտքը էկավ, որ վեկացնելը լավ ա, մի բան էլ ա
կիմանա: Վեկացրուց: էդ քնած մարդն էլ Սողոմոն իմաստունն ա
ըլել:

Սողոմոն իմաստունը ասավ.— Ա՛յ որդի, ես քնած չի, ես քեղ
ճամփա պահեի, թե տենամ քու աճալն ա՞, թե՛ չէ: Առաջիդ գա-
լիս ա Օխտը գլխանի ուշապը, գալիս ա, որ ռաստ գա քեզ, ուտի,
խաղենդ էլ կերթա, ջանդ էլ կերթա: Հա՛, էս որ ինձ վե կացրիր,
իմ շվաքումը արի գնանք, անց կենանք:

Սրանք գնացին, անց կացան, Ուշապին ռաստ չի էկան: Գնա-
ցին քշերը մնաց էդ մարդի շվաքումը: Հըմի արի տես, որ էս
մարդը էն օսկիքը որ առել էր, էն դդար էր ուրախացել, որ խնձորը
մտահան էր արել, որ իմաստունին տա:

Արի, որ ռավուտը լիսացավ, վե կացավ, որ ըղու ըլի, իմաս-
տունը ասավ.— Որդի, էն աստծու կամքն էր, որ էն ղրափտան
խնձորիցը բերել էր քեզ ռաստ էր բերել, էդ խաղինեն, էդ տակին,
որ տարար, էլ եդ շգաս, քու ընխանց ղսմաթը էդքան էր, որ տունես
տուն, էլ եդ շգաս էդ ճամփովը:

